



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք

15 հուլիս 2022

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Դավիթ Հարությունյանը, Կարեն Մանասերյանը, Սոնա Մարգարյանը, Եղիշե Նազարյանը, Մարատ Շահբազյանը, Սամվել Ոսկանյանը, Արմեն Վարդանյանը, Ռոմիկ Վարդանյանը, Վահե Վարդանյանը

Նիստին մասնակցում էին՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Հրաչյա Վարդանյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Քրիստինե Պողոսյանը (Ժ/պ), քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արմեն Աղաջանյանը (Ժ/պ), նույն բաժնի առաջատար մասնագետ Սամվել Օրդոյանը (Ժ/պ), ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ Հայկանուշ Ավագյանը (Ժ/պ), առաջատար մասնագետ Անի Գրիգորյանը (Ժ/պ):

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Վարդան Ավագյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Մարինե Հովհաննիսյանը:

Լսեցին.

ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝ **ավագանին
ո ր ո շ Ե ց.**

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 15-ի արտահերթ նիստի օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 15-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի 2-րդ եռամսյակի ընթացքի մասին:

3) Դրամական օգնություն տրամադրելու մասին:

4) Համայնքային ենթակառուցվածք գործող մանկապարտեզների աշխատանքային ռեժիմը սահմանելու մասին:

5) Համայնքային ենթակառուցվածք գործող մանկապարտեզների աշխատակիցներին հերթական արձակուրդն օգտագործելու համար թույլտվություն տալու մասին:

6) Համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 8-ի թիվ 83-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

7) Համայնքային սեփականություն հանդիսացող հողերն աճուրդով օտարելու համար թույլտվություն տալու մասին:

8) Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող հողատարածքները համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

9) Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

10) Եղեգնաձոր համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-12	Դեմ-0	Ձեռնպահ-0
---------	-------	-----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96-Ա/

Լսեցին.

ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱՎԱԳՅԱՆ/

